

## Մաքսերի և առևտրի 1994 թ. գլխավոր համաձայնագրի XXIV Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնություն

Անդամները,

հաշվի առնելով ՄԱԳՀ-1994-ի XXIV Հոդվածի դրույթները,

ընդունելով, որ մաքսային միությունների և ազատ առևտրի գոտիների թիվն ու կարևորությունը մեծապես աճել է՝ սկսած ՄԱԳՀ-1947-ի ստեղծումից, և այսօր դրանք ընդգրկում են համաշխարհային առևտրի զգալի մասը,

ընդունելով, որ այդպիսի համաձայնագրերի կողմերի տնտեսությունների ավելի սերտ միասնականացումը կարող է նպաստել համաշխարհային առևտրի ընդլայնման գործին,

ընդունելով նաև, որ այդ նպաստն աճում է, երբ բաղկացուցիչ տարածքների միջև տուրքերի և առևտրային գործունեությունը սահմանափակող այլ կանոնակարգումների վերացումը տարածվում է ամբողջ առևտրի վրա, և նվազում է, երբ առևտրի որևէ կարևոր ոլորտ դուրս է թողնվում,

վերահաստատելով, որ այդպիսի համաձայնագրերի նպատակը պետք է լինի բաղկացուցիչ տարածքների միջև առևտուրը դյուրինացնելը և ոչ, թե այդ տարածքների հետ այլ Անդամների առևտրի խոչընդոտների ավելացումը, և որ դրանց կազմավորման կամ ընդարձակման ժամանակ դրանց կողմերը պետք է հնարավոր առավելագույն չափով խուսափեն այլ Անդամների առևտրի վրա վնասակար ազդեցություններ ստեղծելուց,

համոզված նաև, որ կարիք կա մեծացնելու XXIV Հոդվածի համաձայն ծանուցված համաձայնագրերի վերաքննության գործում Ապրանքների առևտրի խորհրդի ունեցած դերի արդյունավետությունը՝ նոր կամ ընդլայնված համաձայնագրերի գնահատման ընթացակարգերի և չափանիշների հստակեցման և XXIV Հոդվածի բոլոր համաձայնագրերի թափանցիկության բարելավման միջոցով,

ընդունելով, որ XXIV Հոդվածի 12-րդ կետով սահմանված պարտավորությունների վերաբերյալ ընդհանուր հասկացողության կարիք կա,

սույնով համաձայնում են հետևյալի մասին.

1. Մաքսային միությունները, ազատ առևտրի գոտիները և մաքսային միության կամ ազատ առևտրի գոտու կազմավորման տանող միջանկյալ համաձայնագրերը XXIV Հոդվածի հետ համապատասխանության մեջ լինելու համար պետք է այլոց թվում բավարարեն այդ Հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի դրույթներին:

### Հոդված XXIV.5

2. Մաքսային միության կազմավորումից առաջ և հետո կիրառվող տուրքերի և առևտրային գործունեության այլ կանոնակարգումների ընդհանուր ընդգրկման գնահատումը XXIV Հոդվածի 5«ա» կետի համաձայն՝ տուրքերի և վճարների մասով հիմնվում է մաքսային դրույթաչափերի կշռված միջինի և հավաքված մաքսատուրքերի ընդհանուր գնահատման վրա: Այդ գնահատումը հիմնվում է նախորդող հատկանշական ժամանակահատվածի համար ներմուծման վիճակագրության վրա, որը տրամադրում է մաքսային միությունը՝ ըստ մաքսային հոդվածների, ըստ քանակի և արժեքի՝ տարանջատված ըստ ԱՀԿ ծագման երկրների: Քարտուղարությունը մաքսային դրույթաչափերի կշռված միջինն ու հավաքված մաքսատուրքը հաշվարկում է համաձայն Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուզվայի փուլում գործածված մաքսային առաջարկի գնահատման մեթոդաբանության: Այս նպատակով, որպես տուրքեր ու վճարներ հաշվի են առնվում տուրքի գործող դրույթաչափերը: Ընդունվում է, որ առևտրային գործունեության այն այլ կանոնակարգումների (որոնց համար դժվար է քանակական արտահայտություն տալն ու գումարելը) ընդգրկման ընդհանուր գնահատման նպատակով կարող է պահանջվել առանձին միջոցների, կանոնակարգումների, ընդգրկված արտադրանքների և ազդեցության ենթակա առևտրի հոսքերի քննություն:

3. XXIV Հոդվածի 5«գ» կետում հիշատակված «ժամանակի պատշաճ տևողությունը» պետք է 10 տարին գերազանցի միայն բացառիկ դեպքերում: Այն դեպքերում, երբ միջանկյալ համաձայնագրի կողմ հանդիսացող Անդամները համարում են, որ 10 տարին բավականաչափ չէ, Ապրանքների առևտրի խորհրդին սպառիչ բացատրություն են տալիս ավելի երկար ժամանակահատվածի անհրաժեշտության

վերաբերյալ:

## Հոդված XXIV.6

4. XXIV Հոդվածի 6-րդ կետով սահմանվում է ընթացակարգ, որը պետք է պահպանել, երբ մաքսային միություն կազմավորող Անդամը առաջարկում է բարձրացնել տուրքի անրագրված դրույթաչափը: Այս առումով Անդամները վերահաստատում են, որ XXVIII Հոդվածով սահմանված ընթացակարգը, ինչպես այն մշակվել է 1980թ. նոյեմբերի 10-ին ընդունված ուղեցույցներում (BISD 27S/26-28) և ՄԱԳՀ-1994-ի XXVIII Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնության մեջ, պետք է սկսվի մինչև մաքսային միության կազմավորմամբ կամ մաքսային միության կազմավորմանը տանող միջանկյալ համաձայնագրով մաքսային զիջումների փոփոխումը կամ հանումը:

5. Այդ բանակցությունները կանցկացվեն բարեխղճորեն՝ նպատակ ունենալով հասնելու փոխադարձ բավարար փոխհատուցողական կարգավորումների: Համաձայն XXIV Հոդվածի 6-րդ կետի պահանջի այդ բանակցություններում պատշաճ ուշադրություն է դարձվում մաքսային միության կազմավորման ժամանակ դրա մյուս մասնակիցների կողմից մաքսային նույն հոդվածի մասով կատարված տուրքերի նվազեցմանը: Եթե այդ նվազեցումները բավարար չլինեն անհրաժեշտ փոխհատուցողական կարգավորում ապահովելու համար, ապա մաքսային միությունը կառաջարկի փոխհատուցում, որը կարող է լինել մաքսային այլ հոդվածների համար տուրքերի նվազեցման ձևով: Այդ առաջարկը հաշվի է առնվում այն Անդամների կողմից, որոնք փոփոխված կամ հանված անրագրման մասով բանակցային իրավունք ունեն: Փոխհատուցողական կարգավորումը չընդունվելու դեպքում բանակցությունները պետք է շարունակվեն: Եթե, չնայած այդ ջանքերին, բանակցությունների սկզբից հետո՝ պատշաճ ժամանակահատվածի ընթացքում համաձայնություն չի կարող ձեռք բերվել ՄԱԳՀ-1994-ի XXVIII Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնությամբ մշակված XXVIII Հոդվածի համաձայն անցկացվող փոխհատուցողական կարգավորումների շուրջ բանակցություններում, ապա մաքսային միությունն այնուամենայնիվ ազատ է փոփոխել կամ հանել զիջումները. այդ դեպքում տուժող Անդամներն ազատ են էականորեն համարժեք զիջումներ հանել համաձայն XXVIII Հոդվածի:

6. ՄԱԳՀ-1994-ով մաքսային միության կազմավորման կամ մաքսային միության կազմավորմանը տանող միջանկյալ համաձայնագրի արդյունքում կատարված տուրքերի նվազեցումից օգտվող Անդամների վրա դրա մասնակիցներին փոխհատուցողական կարգավորումներ տրամադրելու պարտավորություն չի դրվում:

### Մաքսային միությունների և ազատ առևտրի գոտիների վերաքննություն

7. Աշխատանքային խումբը քննության է առնում XXIV Հոդվածի 7«ա» կետի համաձայն կատարված բոլոր ծանուցումները՝ հաշվի առնելով ՄԱԳՀ-1994-ի համապատասխան դրույթներն ու սույն Փոխհամաձայնության 1-ին կետը: Աշխատանքային խումբն Ապրանքների առևտրի խորհրդին զեկուցագիր է ներկայացնում այդ առնչությամբ ունեցած իր հայտնաբերումների վերաբերյալ: Ապրանքների առևտրի խորհուրդը կարող է Անդամներին այսպիսի հանձնարարականներ տալ, ինչպիսիք որ նպատակահարմար է համարում:

8. Միջանկյալ համաձայնագրերի կապակցությամբ աշխատանքային խումբը կարող է իր զեկուցագրում համապատասխան առաջարկություններ տալ նախատեսված ժամկետների և այն միջոցների վերաբերյալ, որոնք պահանջվում են մաքսային միության կամ ազատ առևտրի գոտու կազմավորումն ավարտելու համար: Անհրաժեշտության դեպքում այն կարող է համաձայնագրի հետագա վերաքննություն նախատեսել:

9. Միջանկյալ համաձայնագրի կողմ հանդիսացող Անդամները Ապրանքների առևտրի խորհրդին ծանուցում են այդ համաձայնագրում ընդգրկված ծրագրի և ժամկետացանկի էական փոփոխությունների մասին, և խորհուրդը քննության է առնում փոփոխությունները, եթե այդպես պահանջվում է:

10. Եթե XXIV Հոդվածի 7«ա» կետի համաձայն ծանուցված միջանկյալ համաձայնագիրը, ի հակադրություն XXIV Հոդվածի 5«գ» կետի, ծրագիր ու ժամկետացանկ չի պարունակում, ապա աշխատանքային խումբն իր զեկուցագրում այդպիսի ծրագիր ու ժամկետացանկ է առաջարկում: Կողմերը, կախված դեպքից, չեն պահպանում կամ ուժի մեջ չեն դնում այդ համաձայնագիրը, եթե պատրաստ չեն այն փոփոխել այդ առաջարկությունների համաձայն: Այդ դեպքում նախատեսվում է առաջարկությունների իրականացման հետագա վերաքննության անցկացում:

11. Ինչպես նախատեսել են ՄԱԳՀ-1947-ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ՝ ՄԱԳՀ-1947-ի խորհրդին ուղղված տարածաշրջանային համաձայնագրերի մասին զեկուցումների վերաբերյալ իրենց հրահանգով (BISD 18S/38), մաքսային միությունները և ազատ առևտրի գոտիների մասնակիցներն Ապրանքների առևտրի

խորհրդին պարբերաբար զեկուցում են համապատասխան համաձայնագրի գործողության մասին: Համաձայնագրերում կատարվող ցանկացած նշանակալի փոփոխության և(կամ) զարգացման մասին զեկուցվում է դրանց տեղի ունենալուն պես:

#### Վեճերի կարգավորում

12. Հոդված XXIV-ի՝ մաքսային միություններին, ազատ առևտրի գոտիներին կամ մաքսային միության կամ ազատ առևտրի գոտու կազմավորմանը տանող միջանկյալ համաձայնագրերին առնչվող դրույթների կիրառումից ծագող ցանկացած հարցի կապակցությամբ կարող են կիրարկվել Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված ու ըստ դրա կիրառվող՝ ՄԱԳՀ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները:

#### Հոդված XXIV.12

13. ՄԱԳՀ-1994-ի համաձայն՝ յուրաքանչյուր Անդամ ամբողջությամբ պատասխանատու է ՄԱԳՀ-1994-ի դրույթների պահպանման համար և ձեռնարկում է իրեն մատչելի պատշաճ միջոցներ՝ ապահովելու համար դրանց պահպանումն իր տարածքում եղած տարածաշրջանային և տեղական կառավարությունների և իրավասու մարմինների կողմից:

14. Անդամի տարածքում եղած տարածաշրջանային և տեղական կառավարությունների կամ իրավասու մարմինների ձեռնարկած այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են իր կողմից դրանց պահպանման վրա, կարող են կիրարկվել Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ մշակված ու ըստ դրա կիրառվող՝ ՄԱԳՀ-1994-ի XXII և XXIII Հոդվածների դրույթները: Եթե Վեճերի կարգավորման մարմինը վճռում է, որ ՄԱԳՀ-1994-ի որևէ դրույթ չի պահպանվել, ապա պատասխանատու Անդամը ձեռնարկում է պատշաճ իրեն մատչելի պատշաճ միջոցներ՝ դրանց պահպանումն ապահովելու համար: Փոխհատուցմանը և զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցմանը վերաբերող դրույթները կիրառվում են այն դեպքերում, երբ հնարավոր չի եղել երաշխավորել այդ պահպանումը:

15. Յուրաքանչյուր Անդամ հանձն է առնում բարյացակամ վերաբերմունք ցույց տալ մեկ այլ Անդամի կողմից առաջինի տարածքում ՄԱԳՀ-1994-ի գործողության վրա ազդող միջոցների առնչությամբ ներկայացված նյութերին վերաբերող խորհրդակցությունների նկատմամբ և համապատասխան հնարավորություն ստեղծել դրանց համար: